«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Մանկավարժական վարպետությունն ու տակտը ուսումնադաստիարակչական գործընթացում
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու և գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Շուշանիկ Կուրղինյան
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Հրազդանի Ա. Մռավյանի անվան N4 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ...……..3

2.ԳԼՈՒԽ 1 ……..……..5

3.ԳԼՈՒԽ2 ...……..……..13

4.ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ...……17

5.ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ……...19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայտնագործություն արած չեմ լինի, եթե ոչ ավել անգամ փաստեմ, որ ուսուցչի աշխատանքը չափազանց բարդ է ու բազմակողմանի: Լավ ուսուցիչ դառնալու համար պետք է ոչ միայն շատ գիտենալ, այլև շատ կարողանալ:

Իմ կարծիքով,«Մանկավարժական վարպետությունն ու տակտը ուսումնադաստիարակչական գործընթացում »թեման, որի շուրջ է իմ հետազոտական աշխատանքը, բավական արդիական և նույնիսկ հրատապ նշանակություն ունեցող դրսևորում է: 21-րդ դարում, երբ խելահեղ զարգանում են տնտեսությունը, գիտության և տեխնիկայի բոլոր ճյուղերը, երբ ՏՀՏ-ն մտել է կյանքի բոլոր ոլորտները, անմասն չի մնացել նաև դպրոցը, որն իրականացնում է ոչ միայն հանրակրթության պահանջները, այլև մարդկային ճիշտ և նորմալ հարաբերությունների կառուցման գործընթացը:

Ուսումնադաստիարակչական գործընթացում ուսուցիչները երբեմն ծրագրային աշխատանքները կատարում են ըստ պարտադիր պահանջի՝ հաճախ հաշվի չառնելով աշակերտների, դասարանների կարողությունները, հնարավորությունները, անձնական պատճառները և այլն:Եվ երբեմն այդ պարտադրված պահանջներից տուժում է ուսուցման և ուսումնառության որակը:Ուստի,**դասապրոցեսի ճիշտ, արդյունավետ և որակյալ կազմակերպման գործում հսկայական դեր ունի ուսուցչի մանկավարժական վարպետությունն ու տակտը: Հենց նրա ճիշտ գործունեությամբ են ձևավորվում ուսուցման և ուսումնառության նպատակներն ու խնդիրները:Խելամիտ ուսուցիչը նախ ինքը պետք է զարգացնի իր գիտելիքները, կատարելագործի իր հմտությունները, անձնային որակները, տիրապետի մանկավարժական գործունեության չափազանց նուրբ արվեստին, նպաստի ուսման որակի բարձրացմանը, խթան հանդիսանա ապագա ճիշտ քաղաքացի ձևավորելու գործընթացին:**

Իսկական ուսուցիչը բացահայտում է կրթության խնդիրները, վերլուծում է դրանք,կիրառում զանազան մեթոդներ, հանդես գալիս խելամիտ առաջարկություններով, որպեսզի հասնի այն նպատակների իրագործմանը, որը պայմանավորված է հանրակրթության պետական չափորոշիչներով:

17-րդ դարի չեխ մանկավարժ-հումանիստ Յան Ամոս Կոմենսկին գրում է, որ ուսուցչին«…տրված է հիանալի պաշտոն, որից բարձր ոչինչ չի կարող լինել արևի տակ»: Նա ուսուցչին համեմատում էր այգում սիրով բույսեր աճեցնող այգեպանի հետ, որը հոգատար և իմացաբար կառուցում է մարդկային էության բոլոր անկյունները,

քանդակագործի հետ, որը մանրակրկիտ զարդանկարում է, հղկում մարդկանց մտքերն ու հոգիները, զորավարի հետ, որը եռանդուն կերպով հարձակման է տանում բարբարոսության և տգիտության դեմ:

Դպրոցում ամենակարևոր երևույթը, դիտելու համար ամենաուսանելի առարկան , աշակերտի համար ամենակենդանի օրինակը ինքը՝ ուսուցիչն է: Նրա անձնավորությունն է նվաճում իր նկատմամբ հարգանք, ազդեցություն ուժ: Գաղտնիք չէ, որ լավ ուսուցիչներով է գնահատվում նաև դպրոցը:

Ռուս ականավոր մանկավարժ Կ. Դ. Ուշինսկին այսպես է բնութագրել ուսուցչի մասնագիտության կարևորությունը. «Դաստիարակության ժամանակակից ընթացքի մակարդակի վրա կանգնած դաստիարակն իրեն զգում է կենդանի, գործունյա անդամն այն մեծ օրգանիզմի, որը պայքարում է տգիտության և մարդկային արատների դեմ, միջնորդ է իրեն զգում այն ազնիվի ու վեհի, որը եղել է մարդկանց անցյալ պատմության մեջ և նոր սերնդի միջև, սերունդ ,որը ճշմարտության, բարօրության համար պայքարած մարդկանց սրբազան պատվիրանների պահապանն է»(Ն.Ե. Կովալյով, Բ.Ֆ. Ռայսկի, Ն.Ս. Սորոկին, Մանկավարժության ներածություն, էջ՝ 11):

ԳԼՈՒԽ 1

ՀՀ կառավարությունը իր մշակած չափորոշիչներով մեծ պատասխանատվությամբ բարձր պահանջներ է դնում միջնակարգ կրթության եռաստիճան համակարգում կրթական և դաստիարակչական աշխատանքներն իրականացնող ուսուցչի առջև:Այսօր իր մասնագիտության և կրթական-դաստիարակչական կարողություններն ու հմտությունները, ՏՀՏ ոլորտում ժամանակակից իմացությունները, 21-րդ դարի ուսուցչին ներկայացվող ամենատարբեր կարողությունները զարգացնելու գործում մեծ և նշանակալի դեր ունեն այն կազմակերպությունները ,որոնք իրականացնում են ուսուցչի պարտադիր ատեստավորման պատասխանատու աշխատանքները:Կազմակերպության ճիշտ և խնամքով ընտրված մասնագետները մեծագույն ջանադրությամբ և որակով կատարում են իրենց աշխատանքը, որից շահում են կրթության որակն ու արդյունավետությունը:

Խիստ արժեքավոր և չափազանց ցանկալի է ,որ կրթության և դաստիարակության ռազմավարական ծրագրերն իրականացնելիս ուսուցիչն ունենա մանկավարժական տաղանդ, այսինքն՝ բարձր օժտվածություն, որն ապահովի իր պարտականությունների հաջող կատարումը: Յուրաքանչյուր ուսուցիչ կարող է և պետք է տիրապետի մանկավարժական վարպետությանը, այսինքն՝ մշտապես կատարելագործի ուսուցման ու դաստիարակության գործընթացը կառավարելու հմտություններն ու կարողությունները և, որ ամենակարևորներից է, ունենա աշակերտի հետ վարվելու տակտ:

Մարդկանց փոխհարաբերությունների մասին խոսելիս տակտը հաճախակի գործածվող բառ է: Այն իր մեջ ամփոփում է բարեկրթություն, քաղաքավարություն, չափավորություն, զսպվածություն, առհասարակ դաստիարակության հասկացություններ:

Տակտը բարոյագիտական - էթիկական կատեգորիա է:Նրա անհրաժեշտ դրսևորումը պայմանավորված է այն բանով, թե ուրիշների հետ իր հարաբերությունների մեջ մարդը որքան նպատակահարմար և ճկուն կարողանում է փոխել իր վերաբերմունքը , ռեակցիան ուրիշների նկատմամբ՝ նրանց բնավորությանը, խառնվածքին և առհասարակ տեղին, ժամանակին ու հանգամանքներին համապատասխան: Տակտի կարևորագույն պայմաններից են իրադրության մեջ նպատակահարմար կերպով կողմնորոշվելը, հանգամանքների մեջ նրբորեն խորանալը, դեպքերի ընթացքն ու ելքը կանխատեսելը և այլն: Տակտը մարդկանց հարաբերությունների հավասարակշիռն է և իր

հերթին կարևոր դեր է կատարում առհասարակ դաստիարակության, մասնավորապես դպրոցական դաստիարակության մեջ, մանկավարժի աշխատանքում:

Անչափ կարևոր է ուսուցչի հեղինակությունը, որը ստեղծվում է այն դեպքում, երբ աշակերտները համոզվում են, որ իրենց ուսուցիչը ոչ միայն մասնագիտական խոր գիտելիքներ ունեցող է, այլև իսկական մարդ, տարիքային հոգեբանական առանձնահատկությունները հասկացող ընկեր է: Երեխաները պետք է հաշվի առնեն, ընդունեն ուսուցչի կարծիքը ոչ նրա համար ,որ նա ղեկավար է, ունի բազմակողմանի գիտելիքներ ,այլ համոզված լինելով , որ նա իսկական մարդ է, պետք է կարողանա վաստակել այդ հարգանքն աշակերտների կողմից:

Մանկավարժական տակտի և վարպետության մասին իր աշխատություններում բազմիցս անդրադարձել է նաև ականավոր մանկավարժ Ս. Ս. Մակարենկոն՝ օգտագործելով իր մանկավարժական հարուստ պրակտիկան:Նա ցույց է տվել երեխաների դաստիարակության գործում մանկավարժական վարվեցողության նշանակության մի նոր կողմը ,նրա դերը մանկական առողջ կոլեկտիվի ստեղծման համար, ինչպես և կոլեկտիվի միջոցով դաստիարակության մեջ տակտի դերը: Մանկավարժական տակտի էական հատկանիշը նա համարում է ուսուցիչ – դաստիարակի վերաբերմունքի անկեղծությունը կոլեկտիվի և ամեն մի աշակերտի նկատմամբ:Մակարենկոն տակտը բնորոշում է որպես մանկավարժի իսկական , մարդկային անկեղծ զգացմունքի արտահայտություն:

Մանկավարժական տակտի հիմնախնդիրը , ըստ էության, ուսուցչի և աշակերտի փոխհարաբերության հիմնախնդիրն է:Ուսուցիչը, նայելով աշակերտի դեմքին, պետք է կարողանա հասկանալ նրա տրամադրությունը, նրա հոգում կատարված տեղաշարժերը: Նա պետք է կարողանա կառավարել իր ձայնը, պետք է կարողանա խաղալ: Ուսուցչի ձայնը, դիմախաղը, նիստուկացը մանկավարժական ազդեցության կարևոր միջոցներ են:

Ուսուցչի և աշակերտի փոխհարաբերությունների համար կարևոր նշանակություն ունեն ուսումնական գործընթացի հուզական կողմը և աշակերտի գիտելիքների ճիշտ, արդար և պատճառաբանված գնահատումը: Գնահատելիս ուսուցիչը պարտավոր է լինել ոչ միայն օբյեկտիվ, այլև պետք է մնա աշակերտի բարեկամը, կիսի այն ապրումները ,որ աշակերտի մեջ կարող է առաջացնել լավ կամ վատ գնահատականը: Ուսուցչին ոչ վայել տակտի պատճառով աշակերտի մեջ կարող է առաջանալ բացասական հույզեր, նյարդային ավելորդ լարվածություն: Դրա պատճառ կարող են դառնալ ձայնի բարձր, կոպիտ տոնը, փաստերով ու տեղեկություններով գերհագեցված խոսքը(կան

ուսուցիչներ, որոնք աշակերտի մոտ իբր « շատ զարգացած» երևալու համար հաճախ գործածում են խրթին, անտրամաբանական , ոչ տեղին եզրույթներ և արտահայտություններ , և աշակերտը ձանձրույթով, երբեմն չհասկանալով հիասթափվում է և՛ առարկայից, և՛ ուսուցչից) , անհարկի կրկնություններն ու հարցերը:

«Մանկավարժի իմաստուն իշխանությունը ,- գրում է մեծ մանկավարժ Վ. Ս. Սուխոմլինսկին ,- այնպիսի գործիք է, որը ուսուցչի ձեռքում կարող է դառնալ ոչ միայն ստեղծարար , այլև ավերիչ միջոց: Այդ գործիքը օգտակար կարող է լինել , եթե ուսուցիչը գործում է ոչ թե ռոպեական տրամադրությամբ, այլ բազմակողմանիորեն խորհելով»(Վ. Ս. Սուխոմլինսկի, Քաղաքացու ծնունդը, էջ՝ 254):

Ուսուցիչը պետք է ճանաչի իր բոլոր աշակերտներին, նրանց խառնվածքը, իմացական կարողությունները, տարիքային առանձնահատկությունները, նախասիրությունները, կոլեկտիվում ստանձնած նրանց տեղն ու դերը, նրանց ընկերական ու բարեկամական կապերը և , իհարկե, ընտանիքը: Իսկ այս ամենի համար նա պետք է ունենա մանկավարժական և հոգեբանական տեսական գիտելիքներ, մանկավարժական աշխատանքի նվիրում և ձգտում: Նա պետք է ունենա աշակերտների համակրանքը, հարգանքը վայելելու և նրանց դեպի իրեն ձգելու կարողությունը, Սուխոմլինսկու բառերով ասած՝ պետք է կարողանա իր սիրտը նվիրել երեխաներին:

Ուսուցիչը պետք է կարողանա կատարել իր հիմնական գործառույթները: Նա աշակերտներին պետք է զինի գիտելիքներով, դաստիարակի նրանց մեջ ժամանակակից կրթական մակարդակ ունեցող և անձնային ու քաղաքացիական վեհ հատկանիշներով օժտված աշակերտներ, ձևավորի նրանց ունակությունները, խթանի կարողությունները, զարգացնի հմտությունները և կարողունակությունները:

Շատ կարևոր նշանակություն ունեն նաև ուսուցչի անձնական արժանիքները՝ նրա արտաքին կուլտուրան, աշակերտների հետ վարվեցողության տակտը, քաղաքավարությունը, բարյացակամ վերաբերմունքը, պատճառաբանված համառությունը և զսպվածությունը, հավասարակշռված բնավորությունը, համբերատարությունը, քմահաճություն չդրսևորելու և տրամադրությամբ չգործելու , աշակերտի անձնավորությունը խորապես հարգելու, նրա վստահությունը շահելու կարողությունն ու ընդունակությունը:

Ուսուցիչը պետք է կարողանա աննկատելիորեն թափանցել աշակերտի և կոլեկտիվի գաղտնիքների աշխարհը, իմանա նրանց հասարակական կարծիքն ու

տրամադրությունը և դրանք հմտորեն հաշվի առնի ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքում:

Ուսուցիչը պետք է անկեղծ, անմիջական վերաբերմունք դրսևորի ոչ միայն աշակերտների, այլև նրանց ծնողների, իր գործընկերների նկատմամբ և վարվի նրանց հետ ինչպես հավասարը հավասարի հետ:

Ուսուցչի հեղինակության վրա կարող են ազդել նաև շատ « մանրուքներ», այսպես կոչված քիչ նկատելի ու պատահական հանգամանքներ: Այդ նշանակում է , որ նա երբեք աշակերտին չպետք է ներկայանա անփույթ և ոչ աչալուրջ տեսքով ու դիրքով:

Մանկավարժի վարպետության և տակտի դրսևորումները կարելի է ներկայացնել կարողունակությունների հետևյալ դասակարգմամբ.

1. Կամային հատկանիշներ, այսինքն՝ սեփական վարքի կառավարման կարողունակություն:
2. Ուշադրության որակներ, առանձնապես դիտողունակություն, ճկունություն:
3. Սոցիալ-հոգեբանական ընկալում կամ դեմքի արտահայտությունը ընթերցելու կարողունակություն:

Ոչ միայն տեսնելու, այլև հասկանալու, այսինքն՝ արտաքին նշանների հիման վրա աշակերտի անձը, նրա հոգեկան վիճակը համապատասխանորեն ներկայացնելու կարողունակություն:

4. Աշակերտի հետ վարվեցողեության գործում «իրեն մատուցելու » կարողունակություն:
5. Հոգեբանական տեսակետից խոսքը լավագույն կերպով կառուցելու, այսինքն՝ խոսքային շփման կարողունակություն:
6. Աշակերտների հետ խոսքային և ոչ խոսքային շփման կարողունակություն:

Աշակերտների նկատմամբ հոգատարությունը, նրանց հետ հոգեկան մտերմությունը ուսուցչին դարձնում են հարազատ մարդ, նրանց խորհրդատու:

Բացառիկ նշանակություն է վերագրում աշակերտի հետ ուսուցչի մանկավարժական վարպետությանը և տակտին տաղանդավոր մանկավարժ Վ. Ս. Սուխոմլինսկին «Մենք՝ ուսուցիչներս, մեր կոլեկտիվներում պարտավոր ենք զարգացնել և խորացնել մեր մանկավարժական էթիկան, դաստիարակության մեջ հաղորդել

մարդասիրական սկզբունքը՝ որպես ամեն մի ուսուցչի մանկավարժական կուլտուրայի կարևորագույն գիծ: Դա մեր մանկավարժական աշխատանքի մի ամբողջ ասպարեզ է»(Վ.Ս. Սուխոմլինսկի, Սիրտս նվիրում եմ երեխաներին, էջ՝ 9):

Մանկավարժի վարպետության և տակտի դրսևորումներից են նաև երեխայի անձի ճանաչումը և նրա արժանապատվության գնահատումը: Ոչինչ այնպես չի կոպտացնում պատանի մարդկային սիրտը, այնպես չի դաժանացնում, ինչպես վիրավորանքը: Բայց դա չի նշանակում , թե աշակերտին չի կարելի հարկադրել , չի կարելի կշտամբել: Մանկավարժական աշխատանքի իսկական վարպետը և՛ ստիպում է, և՛ հարկադրում, և՛ պարտադրում: Բայց այդ բոլորն այնպես է անում, որ մանկական սրտում երբեք չմարի այդ թանկագին կրակը՝ լավը լինելու սեփական ցանկությունը:

Մանկավարժական տակտը ուսուցչի ինքնատիրապետման արտաքին ձև չէ, այլ աշակերտի նկատմամբ ներքին համոզմունքով, անկեղծ ու արդարացի վերաբերմունքի դրսևորումն է: Այն արտահայտվում է ուսուցչի կեցվածքի, խոսքի տոնի , դիմախաղի ու ժեստերի մեջ: Եթե ուսուցիչը արհեստական կեցվածք ընդունի, արհեստական պատնեշներ կառուցի իր և աշակերտների միջև,ձևական մթնոլորտ ստեղծի իր ուսումնադաստիարակչական գործունեության մեջ, այդ դեպքում մանկավարժական տակտի մասին խոսք լինել չի կարող: Մանկավարժական տակտն ու ուսուցչի հեղինակությունը փոխադարձ պայմանավորված են մեկը մյուսով:

Սովորաբար ուսուցչի աշխարհայացքը, նրա վարքը, նրա կյանքը, նրա մոտեցումը յուրաքանչյուր երևույթին այսպես կամ այնպես ազդում են բոլոր աշակերտների վրա: Եվ դա հաճախ կատարվում է աննկատելիորեն: Կարելի է վստահաբար ասել, որ եթե ուսուցիչը շատ հեղինակավոր է, ապա շատ աշակերտների վրա ամբողջ կյանքում մնում են այդ ուսուցչի ազդեցության հետքերը: Ահա թե ինչու նաև կարևոր է, որ ուսուցիչը հետևի իրեն, զգա իր վարքը, որովհետև իր գործողություններն այնպիսի ամենաուժեղ վերահսկողության տակ են գտնվում, ինչպիսի հսկողության տակ աշխարհում չի գտնվում ոչ մի մարդ:

«Մանկավարժական տակտը,- ինչպես նշում է ականավոր մանկավարժ Շ. Սիմոնյանը ,- ուսուցչական ամբողջ կոլեկտիվի, գոնե առնվազն տվյալ դասարանում դասավանդող ուսուցիչների գործն է: Մինչդեռ ուսուցիչներից ոմանք ջանքեր չեն գործադրում աշակերտի հետ մանրակրկիտ աշխատանքի ուղղությամբ, ժամանակ չեն հատկացնում դաստիարակչական արդյունավետ միջոցներ փնտրելու, սխալներից խուսափելու համար և իրենց մանկավարժական , մասնագիտական տկարությունը

քողարկելու նպատակով կարգուկանոն հաստատելու համար երևութական խստություն են ցուցաբերում: Իրենց շարժուձևով, կեցվածքով, խոսակցության տոնով արհեստականորեն իրենց ներկայացնում են սովորական, ամեն ինչում չափված – ձևված, հավակնոտ ու կեղծ հեղինակություն: Այսպիսի ուսուցիչը խորթ ու օտար է մնում աշակերտին: Վերջինս նրա առաջ երբեք չի համարձակվի անկեղծորեն բացել իր սիրտը, հաղորդակից անել նրան իր հուզումներին ու դատողություններին: Նման ուսուցիչը անհրաժեշտ պատկերացում չի կարող ունենալ երեխաների անձնավորության մասին:

Ուսուցիչներից էլ ոմանք աշակերտների մոտ հեղինակություն ձեռք բերելու, որոշ դեպքերում նրանց հաճոյանալու նպատակով համարյա թե ջնջում են բոլոր տեսակի սահմանները, ամեն ինչում ընդառաջում են աշակերտներին, իջնում ուսուցչի իրենց բարձրությունից: Իսկ երբեմն էլ ուսուցչի սառը, հաճախ չոր, պաշտոնական վերաբերմունքը աշակերտին թույլ չի տալիս ուսուցչի մեջ տեսնել մարդկայինը . նրանց բաժանում է մեծ անջրպետ, և մեկը մյուսի համար ուսումնառության ամբողջ ժամանակամիջոցում այդպես էլ մնում են խորթ ու օտար: Այս երկու դեպքում էլ ուսուցիչները թույլ են տալիս մանկավարժական անտակտություն»(Շ. Սիմոնյան, Մանկավարժական տակտ, էջ՝ 48- 49):

Ուսուցչի վարպետության բաղկացուցիչ մասն է կազմում մանկավարժական տեխնիկան , որն իր մեջ ներառում է երեխաների հետ շփման ճիշտ տոն ու ոճ ընտրելու կարողություն, ինչպես իր, այնպես էլ աշակերտների ուշադրությունը կառավարելու հմտություն, տեմպի զգացում մանկավարժական գործողություններում ու վճիռներում, աշակերտների արարքների նկատմամբ իր վերաբերմունքը և վերջինիս հուզական երանգավորումը կառավարելու և ցուցադրելու ունակություններ:

Ուսուցչի տեխնիկայի մեջ է մտնում նաև նրա խոսքի կուլտուրան, այսինքն՝ ճիշտ առոգանությունը, կարգավորված ձայնը,միմիկայի և ժեստիկուլյացիայի միացումը խոսքին: « Չի կարող լավը լինել այն դաստիարակը ,- ասում է Մակարենկոն ,- որը չի տիրապետում միմիկային, որը չի կարող իր դեմքին տալ անհրաժեշտ արտահայտություն և զսպել իր տրամադրությունը: Դաստիարակը պետք է կարողանա կազմակերպել, կատակել, լինել ուրախ, , բարկացած» (Կովալյով, Ռայսկի , Սորոկին, Մանկավարժական ներածություն, էջ՝ 23-24):

Մանկավարժական տակտը, ըստ բազմաթիվ տեսաբանների, բնատուր հատկություն չէ: Այն ամեն ուսուցիչ դաստիարակում է իր մեջ մանկավարժական

գործունեության ընթացքում: Բայց ես մի փոքր այլ կարծիք ունեմ: Ըստ իս, մանկավարժի մասնագիտություն ընտրողներն իրեն մեջ որոշ չափով ունեն այն ներքին անբացատրելի ուղղվածությունը , որ կոչվում է նվիրում, սեր, նույնիսկ անձնազոհություն:

Մանկավարժական տակտը պահանջում է աշխատանքի անհատականացում: Դա առավել ևս երևում է այսպես կոչված «դժվար» երեխաների, ԿԱՊԿՈՒ աշակերտների, նույնիսկ օրինակելի վարք ունեցող աշակերտների ուսումնադաստիարակչական գործընթացում:

Մանկավարժական տակտը դաստիարակչական այնպիսի գործոն է, որն ազդում է աշակերտների ոչ միայն ինտելեկտուալ կյանքի , այլև զգացմունքային, կամային ոլորտի վրա: Այն ի վիճակի է փոխելու աշակերտի զգացմունքների, համոզմունքների բնույթը և աստիճանը, ազդելու պահանջմունքների , հետաքրքրությունների վրա: Երբեմն մանկավարժական տակտը իր ընդունված հասկացողությամբ անհրաժեշտ արդյունք չի տալիս: Կարծես արվում է ամեն ինչ, բայց հակառակ արդյունքն է ստացվում: Աշակերտին ահասկանալի են մնում ուսուցչի, դասարանի ղեկավարի մեղմ, համաչափ տոնն ու հոգատարությունը: Նման դեպքերում չի բացառվում ավելի խիստ միջամտության անհրաժեշտությունը, պատիժների ու խրախուսանքների կիրառումը: Մանկավարժական տակտը պետք է օգնի աշակերտներին հասկանալու խրախուսանքի ու պատիժների , դպրոցական կարգուկանոնի, ուսումնական ու դաստիարակչական ձեռնարկումների հասարակական իմաստը:

Ուսուցչի վարպետության և տակտի բարձր մակարդակը ենթադրում է.

1.Առարկայի խոր իմացություն՝գիտության ժամանակակից զարգացմանը զուգընթաց:

2.Ուսուցչի մեթոդական զինարան, որն ապահովում է ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպում:

3.Երեխային, կոլեկտիվը տեսնելու, նրանց հետաքրքրությունները, պահանջները հասկանալու, յուրաքանչյուրի բնավորության և ընդունակությունների առանձնահատկությունները արգորեն նկատելու, սովորողների վրա ներգործելու ամենից ավելի նպատակահարմար ձևերն ու մեթոդները որոշելու կարողություն:

4.Սովորողների գործունեությունը կազմակերպելիս իր սեփական անձնային որակները հմտորեն օգտագործելու կարողություն:

Մանկաավարժական տակտի, ուսուցչի խոսքի կուլտուրայի, նրա՝ դասարանը գրավելու կարողության մասին իր կարծիքն է հայտնել Յու. Ս. Ամիրջանյանը իր «Զրույցներ սկսնակ ուսուցչի հետ» գրքույկում և բերում մի հիանալի օրինակ. «Խոսքը պետք է լինի կենդանի ու պատկերավոր, վառ ու արտահայտիչ , երանգավորված ու հուզական: Նրանում պետք է իսպառ բացակայեն զանազան անճշտությունները, պիտի խուսափել միապաղաղ, ձգձգված, հոգնեցնող, ձանձրույթ ու անտարբերություն առաջացնող խոսքից»(էջ՝ 11): «Իսկական ուսուցիչը նա է, ով աշակերտի մեջ իսկական մարդուն է կյանքի կոչում: Մեր պարտքն է լուսավորել երեխայի ամբողջ հոգին: Երեխան մեր կանաչ այգու ամենագեղեցիկ շիվն է, որը պիտի դառնա հզոր կաղնի: … Մենք երեխայի հոգու շինարարներն ենք և ոչ մի դեպքում իրավունք չունենք շեղվելու այն «գլխավոր հատակագծից», որ սահմանված է մարդուց մարդ պատրաստելու համար»(էջ՝13):

ԳԼՈՒԽ 2

Ուսուցչի տակտը արտահայտվում և դրսևորվում է սովորողների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքում նրանց հետ շփվելու ձևի, նրանց վրա ներգործելու մեթոդների ու հնարների մեջ: Ուսուցչի լավ, ոգևորող տրամադրությունը , նրա կեցվածքը, շարժուձևը, խոսքի ուժը , նրա անձնավորության օրինակը ուսուցման ու դաստիարակության լավագույն գործոններն են:

Տարիների հեռավորությունից անսահման երախտիքի զգացումով եմ հիշում ֆիզիկայի ուսուցչուհուս՝ Սվետլանա Մուշեղյանին: Նրա կոկիկությունը, ճաշակով հագնվելը, իմաստավորված խոսքը, նույնիսկ քայլվածքը տարբերվում էին մյուս ուսուցիչներից: Մի տեսակ իդեալ էր դարձել նա մեզ համար: Նրա շարժումներն անգամ զարմանալիորեն իմաստավորված էին: Այս չքնաղ հատկությունները միանում էին նրա խոր գիտելիքներին: Յուրաքանչյուր քայլափոխում նրբանկատ էր, ուշադիր և հոգատար: Ուներ շատ բարձր կարգի տակտ, կուլտուրա : Ուղղակի անկարելի էր նրա դասը չսովորել: Այնքան հետաքրքիր, վառ ու պատկերավոր էր բացատրում նոր դասը, որ ուղղակի քար լռության մեջ էր լսվում նրա ձայնը: Մանավանդ ավելի կլանված ու էլ ավելի հետաքրքրությամբ էինք լսում, երբ խոսքը զուգակցվում էր ֆիզիկական փորձերի հետ:Եվ ես երազում էի , որ եթե ուսուցիչ դառնամ, ապա նրանից շատ բաներ եմ կիրառելու:

Աշակերտների հետ հոգեբանական շփման գործում մեծ է ուսուցչի խոսքի արտահայտիչ նշանակությունը: Նա աշակերտների մեջ ստեղծում է ակտիվ մտավոր աշխատանքի նպաստավոր հոգեվիճակ: Ահա իմ ծանոթ ուսուցիչներից մեկի(ի դեպ, նա իմ աշակերտուհին է եղել) խոստովանությունը դրա մասին. « Իմ ուսուցչական աշխատանքի առաջին տարիներին ես մեծ դժվարություններ էի կրում: Նոր դասը բացատրելիս ես զգում էի , որ աշակերտներ մեծ մասը չի լսում, նրանց ուշադրությունը շեղվում է դասից: իմ ձայնը հուզական էր, երանգավորված, ես գեղեցիկ ասմունքում էի, բայց, միևնույնն է, ինձ չէր հաջողվում նրանց ուշադրությունը կենտրոնացնել և տևականորեն պահել»: Աշակերտուհիս խորհրդի կարգով ինձ էր դիմել: Ես նրան առաջարկեցի փորձել ստեղծագործությունների ընթերցմանը և վերլուծությանը զուգահեռ կենսագրական հետաքրքիր տեղեկություններով, հնարավոր նկարներով համեմել դասերը: Որոշ ժամանակ անց նա ուրախությամբ տեղեկացրեց, որ իրեն աստիճանաբար հաջողվել է գրավել աշակերտների ուշադրությունը և ստեղծել գործնական շփում նրանց հետ:

Մանկավարժական տակտը թույլ է տալիս ճիշտ որոշում գտնել այն կապակցությամբ, թե արժե արդյոք տվյալ աշակերտի հետ խոսակցությունը սկսել նույն րոպեին՝ թույլ տված սխալից անմիջապես հետո, թե նրան հնարավորություն տալ սթափվելու, կշռադատելու իր արարքը:

Շատ հաճախ ուսուցչի պակաս վարպետության և տակտի պատճառով արված կշտամբանքներն ու խրատաբանությունները ավելի են խորացնում ուսուցիչ – աշակերտ սխալ փոխհարաբերությունները:

Իմ դասղեկական դասարանի մի աշակերտուհի, որը սովորաբար միշտ պատրաստ էր լինում դասերին, մի օր անպատրաստ էր եկել: Այն ուսուցիչները , որոնք տեղյակ էին նրա ընտանեկան պատմությանը, ներողամտաբար և ըմբռնումով վերաբերվեցին. անչափահաս աղջիկը խնամում էր անկողնուն գամված մայրիկին, որը տառապում էր անբուժելի հիվանդությամբ: Ծանր գիշերվանից հետո նա որոշել էր գալ դպրոց, որովհետև քիմիայի ուսուցիչը կարևոր դաս էր բացատրելու: Բայց քիմիայի ուսուցիչը «արդարացիորեն» « անբավարար» նշանակեց և բոլորի ներկայությամբ նկատողություն արեց նրան, թե պետք չէ անընդհատ զբաղվել համակարգիչով կամ բջջային հեռախոսով: Աշակերտուհիս վիրավորվել էր և ցանկացել էր պատմել եղելությունը: Բայց ուսուցչուհին ոչ միայն ընդհատել էր նրան , այլև վիրավորական խոսքեր էր նետել նրա երեսին : Աշակերտուհիս վիրավորված դուրս էր եկել դասարանից և եկել ինձ մոտ: Բարեբախտաբար, մեծ ջանքերի շնորհիվ ամեն ինչ հարթվեց:

Հենց առաջին հայացքից չի կարելի չնկատել քիմիայի ուսուցչուհու կողմից թույլ տված անտակտությունը: Եթե ուսուցչուհին տիրապետեր իր համար այնքան կարևոր մանկավարժական տակտին, ապա նա , թեկուզ ինչքան էլ սխալ լիներ աղջիկը, կարող էր խնդրել , որ դասամիջոցին կամ դասերից հետո մոտենա իրեն և պարզաբանի պատճառը:

Հիշում եմ մի դեպք, երբ 7 - րդ դասարանում անցնում էի Հրանտ Մաթևոսյանի «Կանաչ դաշտ» պատմվածքը: Չորս խմբերի բաժանված աշակերտները պետք է հակիրճ ներկայացնեին բովանդակությունը, ներկայացնեին խորհրդանիշ հերոսներին՝ կայծակ, ժայռ, կաղնի, հովիտ, ներկայացնեին գայլին և հովիվներին, իսկ չորրորդ խումբը՝կարմիր պառավ ձիուն և քուռակին: Խմբերից մեկը արդարացնում էր գայլին, իսկ մյուսը խղճում էր ձիուն ու նրա քուռակին: Խմբերի միջև վիճաբանություն սկսվեց, որն արդեն միտում ուներ վերածվելու լեզվակռվի: Ձիու կողմնակիցները անհոգի, անխիղճ և դաժան էին կոչում գայլին և նրա պահվածքը, իսկ գայլականները արդարանում էին , որ իրենք էլ

ապրելու և իրենց ձագերին կերակրելու իրավունք ունեն: Ես լուռ հետևում էի նրանց վեճին(այն դասիս չպլանավորված մաս էր դարձել): Ինձ համար հետաքրքիր էր բացահայտել աշակերտներիս նաև բնական մեկ ուրիշ իրավիճակում: Ես նկատում էի, որ խմբերը միմյանց կարծիքներն ու նկատառումները լսում էին ուշադիր և հարգալից, բայց , չգիտես ինչու, մեկ էլ նորից բորբոքվում էին, հակադրվում և բերում իրենց փաստարկները: Յուրաքանչյուր խումբ իր համոզմունքն էր ճիշտ համարում: Մի քիչ էլ , և հնչում է իմ հարցը.«Կարո՞ղ եմ իմ կարծիքը հայտնել»: Քար լռություն է . յուրաքանչյուր կողմ սպասում է, թե ես ում եմ «արդարացնելու» և ում «մեղադրելու»:Հանգիստ, մեղմ ձայնով, ինքնավստահ խոսքս սկսեցի հայտնի «գոյության կռիվ» արտահայտությամբ: Շնորհակալ եմ կենսաբանության իմ ուսուցչուհուն ինձ տված խոր գիտելիքների համար: Թե որքան կարողացա համոզիչ փաստարկներ բերել և յուրաքանչյուր խմբին արդարացնել իր տեսանկյունից, դա զգացի նրանց գոհունակ ժպիտներից և շարժումներից: Անդրադարձի փուլում հանձնարարեցի հինգրոպեանոց շարադրանք՝ հասկանալու, թե ինչ տպավորություն ստացան չնախատեսված վիճաբանությունից, ինչ սովորեցին, և ինչ կմնա իրենց հիշողության մեջ այս դասից: Ներկայացնեմ շարադրանքներից մեկը: Մի քիչ բռնկվող բնավորություն ունեցող Ռուբենը գրել էր.«Սովորեցի լինել հանդուրժող, հասկացա, թե ինչ է գոյության կռիվը, կաշխատեմ ժամանակից շուտ եզրակացություններ չանել, զարգացան և ամրապնդվեցին գիտելիքներս, հասկացա, որ բնության մեջ ամին ինչ փոխկապակցված է , թե՛ մարդը, թե՛ կենդանիները ունեն մայրական բնազդ , իմաստավորեցի « Կյանքը պայքար է» արտահայտությունը»:

Ճիշտ է, ես իմ օրվա դասապլանից շեղվեցի(թեպետ բոլորը գիտեն, որ դասի ընթացքը քարացած երևույթ չէ), բայց այդ պահին կարողացա ազատ ընտրություն կատարել և աշակերտներին տալ ճանաչողական գիտելիքներ, հարգել նրանց կարծիքը բայց նաև, որքան հնարավոր է, ճիշտ ուղղորդել անձնական պահվածքի դրսևորման գործում:

Շատ հաճախ դասարանը, աշակերտները իրենք են առաջադրում տվյալ դասը իրեց ուսուցանելու ձևերն ու մեթոդները: Ուսուցչի վարպետությունից և տակտից է կախված, թե ինչ որոշում կընդունի, ինչպես կկարողանա հասնել ուսուցման իր նպատակին՝ չշեղվելով պետական չափորոշիչների պահանջներից:

Հիշում եմ այսպիսի մի դեպք: Ութերորդ դասարանում (իմ դասղեկական դասարանն էր. ի դեպ , բավական թուլլ դասարան է) պետք է անցնեի Գրիգոր Զոհրապի

«Այրին» նովելը: Երբ անցանք գրողի կենսագրության և գրական գործունեության մասին դասաժամը, աշակերտները շատ պատրաստակամ և խմբերի բաժանված ներկայացրին : Հասարակական- քաղաքական կյանքը ներկայացնող խումբը նույնիսկ փոքրիկ բեմադրություն էր պատրաստել: Գիտեին, որ ծրագրով նախատեսված նովելը պետք է անցնեին արևմտահայերենով, ուստի դժկամորեն ընդունեցին այդ փաստը , տրտնջացին, որ դժվարանալու են նովելը լավ հասկանալ, առավել ևս՝ պատմել:Ինձ առաջարկեցին նովելի ուսուցման յուրաքանչյուր բաղադրիչ դասաժամ անցնել դասարանում. Այդպես ավելի հեշտ, հասկանալի և տպավորիչ կլիներ, ըստ որում ստեղծագործության մեծ մասը ես պետք է կարդայի (արտահայտիչ և առոգանությամբ ընթերցելու, դերասանական վարպետության և այլ կարողությունների մասին հաճելի ու գնահատողական պատճառաբանված արտահայտությունները հարկ չեմ համարում ներկայացնել) : Ինչ խոսք, այս անգամ էլ թող այդպես լինի. չէ՞ որ աշակերտները ինձ էին վստահել իրենց սովորեցնելու պատրաստակամությունը, բացի դրանից՝ պատվի խնդիր կար:

Դասաժամերի համար կազմեցի ոչ սովորական դասապլան: Նախքան դասս սկսելը նրանց հավաստիացրի , որ այս ստեղծագործությունը իրենց կարդացած ամենագեղեցիկ ու հիշարժան ստեղծագործություններից է դառնալու: Նկատեցի զարմացած, դժկամ և անվստահ շարժումներ և նույնիսկ հեգնական ժպիտ: Հույսս դարձյալ իմ մանկավարժական վարպետության և տակտի դրսևորման մեջ էր: Ես էլ իմ պայմանն առաջարկեցի. որ այն պահին , երբ ընթերցելս դադարեցնեմ, հարցեր եմ ուղղելու, իսկ իրենք , որքան հնարավոր է, պատասխանելու են արևմտահայերեն բառաձևերով: Պայմանն ընդունվեց:

Հատուկ ջանադրությամբ, գործի դնելով ձայնիս հնչերանգը, առոգանությունը, լեզվական արտահատյչականության բոլոր հնարավոր ձևերը, միմիկաս, երբեմն նաև ժեստերս, սկսեցի ընթերցել: Երբեմն աչքի տակով նայում էի՝ ստուգելու , թե ինչ տպավորություն են ստանում: Ոմանց աչքերում տխրություն, ոմանց աչքերում՝ զարմանք, ոմանց աչքերում՝ ատելություն, հիասթափություն, խղճահարություն էի տեսնում, ոմանք էլ թաքուն արտասվում էին: Ինչ խոսք, ես ավելի էի ոգևորվում: Հարցերին պատասխանում էին մեղմ ձայնով, երբեմն նրբորեն քողարկված զայրույթով, երբեմն չթաքցրած հուզմունքով: Նրանք ոչ միայն հասուն պատասխաններ էին տալիս, հետաքրքիր մեկնաբանություններ էին անում, այլև ինքնուրույն շատ եզրահանգումներ էին կատարում:

Ես հասել էի իմ նպատակին: Հետագայում՝ շատ ուրիշ հեղինակների ստեղծագործություններ անցնելիս, նրանք հաճախ էին հիշում Զոհրապի նովելը, և իրենք էլ զարմանում , թե ինչու նախապես թյուր պատկերացում ունեին, , ինչպես ստացվեց, որ շատ սիրեցին «Այրին» գողտրիկ նովելը:

Իմ կարծիքով, ես երբեք չէի հասնի ուսուցման իմ նպատակին, եթե նրանց մերժեի և ստեղծագործությունն ուսուցանեի ընդունված դասական եղանակով:

Մանկավարժակն տակտն ու վարպետությունը իրենց մեջ ընդգրկում են ուսուցչի մասնագիտության համար անհրաժեշտ մի շարք կարևորագույն հմտություններ.

. Աշակերտների համար բարդ ճշմարտությունները հասկանալի ու մատչելի դարձնելու կարողություն, իր դասավանդմամբ ամենքին գրավելու կարողություն, որպեսզի ոչ ոք անտարբեր չմնա:

. Աշակերտներին, նրանց վրա ազդող փաստերն ու երևույթները դիտելու և վերլուծելու կարողություն:

. Ձայնի դրվածքը, շարժումներն ու միմիկան, դերասանական խաղը պետք է բնական ու անկեղծ լինեն աշակերտի աչքում:

Եվ այս բոլորին մենք կարող ենք հասնել միայն ու միայն մանկավարժական վարպետության ու տակտ ունենալու դեպքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացնելով թեմայի շուրջ իմ նկատառումները, ես եկել եմ այն համոզման, որ **ուսուցիչը պետք է հմուտ լինի ոչ միայն իր մասնագիտական կարողություններում, այլև տիրապետի այն թանկ ու անգնահատելի կարողությանը, որ կոչվում է մանկավարժական վարպետություն և տակտ: Այս հիասքանչ կարողությունների շնորհիվ իսկական մանկավարժը կկարողանա վեր հանել հիմնախնդիրները, հասնել այն նպատակներին, որ առաջադրում է պետությունը իր հանրակրթական չափորոշիչներով:**

Կառաջարկեի մանկավարժական համալսարանի դիմորդի հետ նախապես հարցազրույց կազմակերպել՝ որոշակի կարծիք կազմելու նրա ապագա ուսուցչական կարողությունների մասին: Կարծում եմ՝այս դեպքում դպրոց մտնող «պատահական» մարդկանց քանակը կնվազի:

Այսպիսով՝

1. Մանկավարժական տակտը ուսուցչի, դաստիարակի անկեղծ զգամունքների արտահայտությունն է աշակերտի և առհասարակ մարդու նկատմամբ:
2. Մանկավարժական տակտը աշակերտներին ոգևորելու, նրանց հոգում լավը, վսեմը, ներդաշնակը, մարդկայինը պատվաստելու լավագույն միջոց է:
3. Մանկավարժական տակտը աշակերտների բնավորության գծերը դաստիարակելու, նրանց հետ առողջ փոխհարաբերություններ մշակելու, մտերմանալու, նրանց ներաշխարհը թափանցելու հզոր միջոց է:
4. Մանկավարժական տակտը ուսուցչի կերպարը, նրա մանկավարժական հատկանիշները բացահայտելու հիմնական միջոց է:
5. Մանկավարժական տակտն ու վարպետությունը հասարակական պահանջ են, քանի որ դպրոցը ձևավորում է ապագա քաղաքացու կերպար, ուստի ուսուցիչը պետք է կերպար լինի, որպեսզի կարողանա ձևավորել կերպար, կամ պետք է լավ բնավորություն ունենա, որպեսզի ձևավորի իսկական բնավորություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ն. Ե. Կովալյով, Բ. Ֆ. Ռայսկի, Ն. Ս. Սորոկին, Մանկավարժության ներածություն, Երևան 1977:
2. Վ. Ս. Սուխոմլինսկի, Քաղաքացու ծնունդը, Երևան 1978:
3. Վ. Ս. Սուխոմլինսկի, Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան 1977:
4. Շ. Սիմոնյան, Մանկավարժական տակտ, Երևան 1975:
5. Յու. Ամիրջանյան, Զրույցներ սկսնակ ուսուցչի հետ, Երևան 1983: